



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

10 հուլիսի 2024 թվականի N 261-Ա

**«ՄԵՂՐՈՒ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԱԿ
ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ՄՀԵՐ ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻՆ
ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՒՄԸ
ԲՈՒԺԱԿԱՆ ԳԾՈՎ ՏԵՂԱԿԱԼ ՀԱՄԼԵՏ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻՆ
ՎԵՐԱՊԱՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 159-րդ և 163-րդ հոդվածներով, «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով և 14-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով և հիմք ընդունելով «Մեղրու տարածաշրջանային բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության տնօրեն Մ. Աբրահամյանի դիմումը՝

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ.

1. «Մեղրու տարածաշրջանային բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության տնօրեն Միեր Աբրահամյանին 2024 թվականի հուլիսի 15-ից 26-ը ներառյալ տրամադրել 2024 թվականի աշխատանքային տարվա իր ամենամյա արձակուրդի մի մասը՝ 10 աշխատանքային օր:
2. Արձակուրդում գտնվելու ընթացքում «Մեղրու տարածաշրջանային բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության տնօրենի պարտականությունների կատարումը վերապահել ընկերության բուժական գծով տեղակալ Համլետ Հովհաննիսյանին:

